ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Հաստատում եմ
Տնօրեն Դ. Կոստանդյան
«15» 05 2023թ.

# ԽՄԲԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ (ՆԵՐԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ Արվեստ

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ Հայ կինո

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ Ծատրյան Արփինե

Քննարկվել, հավանության է արժանացել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի 15.05.2023թ. նիստում: Արձանագրություն թիվ 5 :

Քննարկվել, հավանության է արժանացել
հումանիտար առարկաների
մեթոդմիավորման 12.05.2023թ. նիստում: Արձանագրություն թիվ 10 :

Մեթոդմիավորման նախագահ ________ Դանիելյան Մ.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ ________ Ավանեսյան Ս.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Մաս. կրթ. աջակցության գծով գծով տնօրենի տեղակալ ________ ԳևորգյանՍ.
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2023թ.

**ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝** «Հայ կինո»

**ԽՄԲԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝**

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ՀԻՄՆԱԿԱՆ (ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ), 1-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

**ԽՄԲԱԿԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝**

**Շաբաթական 1 դասաժամ**

**Ընդհանուր տևողությունը՝** 34 դասաժամ, որից՝ 10.5 դասաժամ տեսական
23.5 դասաժամ գործնական

**ԽՄԲԱԿԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ՝**

«Հայ կինո» խմբակը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: «Հայ կինո» խմբակի պարապմունքները ուղղված են սովորողների մոտ գեղագիտական ճաշակ ձևավորելուն, հայֆիլմ կինոստուդիայի գործունեությանը և արտադրանքին ավելի խոր և մանրակրկիտ ծանոթացնելուն, հեռուստասերիալների անսպառ հոսքի ներքո գրեթե մոռացության մատնված հայ կինոն պահպանելուն: Աշակերտների մոտ կզարգանան հանրակրթական պետական չափորոշչի հանրակրթական տարրական և հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող հետևյալ վերջնարդյունքները. ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին (ՀՊՉ–Տ16), ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում (ՀՊՉ–Տ25), արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը (ՀՊՉ–Տ26), ճանաչի իր ընտանեկան, ազգային և քաղաքացիական պատկանելությունը. ցուցաբերի այլ ազգերի, ավանդույթների, արժեքների նկատմամբ հետաքրքրություն և հարգանք (ՀՊՉ–Տ29), զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ (ՀՊՉ-Տ30), նկարագրի տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը (ՀՊՉ–Հ15), գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ (ՀՊՉ–Հ25), դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ (ՀՊՉ–Հ42), ճանաչի ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտի իր գաղափարները և հույզերը (ՀՊՉ–Հ43), ճանաչի տարբեր ժամանակաշրջանների, ազգերի և մշակութային-գաղափարային խմբերի արժեքները, բացատրի դրանց ազդեցությունն ու արտացոլումը տեղական և համաշխարհային մշակույթի մեջ (ՀՊՉ–Հ44), ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ (ՀՊՉ–Հ45):

**ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ՝**

«Հայ կինո» խմբակի նպատակն է սովորողներին տալ կինոստուդիայի հիմնադրման, վերանվանման, արտադրած ֆիլմերի մասին տեղեկատվություն: Այդ ֆիլմերի միջոցով աշակերտներին ծանոթացնել հայկական ազատագրական ոգու, պայքարի, մշակույթի հետ: Ծանոթացնել հայ և սփյուռքահայ մեծանուն դերասանների և ռեժիսորների կենսագրությանն ու գործունեությանը: Խմբակում հայ կինոյի մասին խոսելու, ֆիլմեր դիտելու շնորհիվ աշակերտները կկարողանան կարևորել հայ կինոյի դերը համաշխարհայի կինոարվեստի մեջ, ընդունել այն որպես հայ կինոյի զարգացման հիմնաքար: Ֆիլմերի դիտման ընթացքում աշակերտները կկարողանան կողմնորոշվել մասնագիտական ընտրության հարցում, ծանոթանալ հայի ազատագրական պայքարին, արժևորել և պահպանել ազգային արժեհամակարգը:

**ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝**

«Հայ կինո» խմբակում կազմակերպվելու են կինոդիտումներ, քննարկումներ: Աշակերտները կդիտեն ֆիլմեր, կհամեմատեն հայ և արտասահմանյան ֆիլմերը, կծանոթանան հայֆիլմ

կինոստուդիայի նկարահանած պատմական, հեղափոխական, մշակութային ֆիլմերին: Ինչպես նաև կծանոթանան սփյուռքահայ ռեժիսորների նկարահանած ֆիլմերի հետ: Կրտսեր դպրոցականների համար կցուցադրվեն հայկական հեքիաթների հիման վրա նկարահանված, ինչպես նաև նորաստեղծ անիմացիոն լիամետրաժ մուլտֆիլմներ, որից հետո աշակերտները կներկայացնեն մուլտֆիլմի բարոյախրատական իմաստն ու նշանակությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

1. Գիտի, թե երբ է ստեղծվել «Հայֆիլմ» կինոստուդիան, ծանոթ է ֆիլմի տեսակներին, «Հայֆիլմ» կինոստուդիայի նկարահանած ֆիլմերին և մուլտֆիլմերին, ֆիլմերի միջոցով գաղափար կազմել հայկական ազատագրական ոգու և պայքարի մասին:
2. Ճանաչել հայաստանաբնակ և սփյուռքահայ ռեժիսորներին՝ Համո Բեկնազարյան, Հենրիկ Մալյան, Անրի Վերնոյ, Էդմոնդ Քյոսայան, Ֆրունզե Դովլաթյան, կիմանա նրանց նկարահանած ֆիլմերը:
3. Ճանաչել հայ կինոյի մեծերին՝ Մհեր Մկրտչյան, Սոս Սարգսյան, Հրաչյա Ներսիսյան, Գալյան Նովենց, Վարդուհի Վարդերեսյան, Շառլ Ազնավուրին նաև որպես դերասան…

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ, թե երբ է ստեղծվել «Հայֆիլմ» կինոստուդիան, ծանոթանալ ֆիլմի տեսակներին, «Հայֆիլմ» կինոստուդիայի նկարահանած ֆիլմերին և մուլտֆիլմերին, ֆիլմերի միջոցով գաղափար կազմել հայկական ազատագրական ոգու և պայքարի մասին:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- գիտի, թե որ թվականին է ստեղծվել պետկինոն և ում կողմից
- գիտի, թե որ թվականին է այն վերանվանվել հայֆիլմի
- գիտի, թե ում անունն է կրում «Հայֆիլմ» կինոստուդիան
- ծանոթ է «Հայֆիլմ» կինոստուդիայի նկարահանած ֆիլմերին և մուլտֆիլմերին
- գաղափար է կազմել հայկական ազատագրական ոգու և պայքարի մասին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական և տեսական պարապմունքների, ֆիլմերի և մուլտֆիլմերի դիտման միջոցով: Ուսումնառության ընթացքում աշակերտները կդիտեն ֆիլմեր և մուլտֆիլմներ, ընկերների և խմբավարի հետ կքննարկեն ֆիլմի հերոսներին, գլխավոր հերոսների դերակատարներին, ռեժիսորին, աշակերտներին կտրվեն քարտեր հետևյալ հարցերով

- Ո՞ր ֆիլմից է հետևյալ թևավոր արտահայտությունը
- Ո՞ր հեքիաթի հիման վրա է նկարահանվել հետևյալ մուլտֆիլմը
- Ո՞րն է տվյալ ֆիլմի հիմնական գաղափարը
- Երբ է հիմնադրվել հայֆիլմ կինոստուդիան և ո՞ւմ անունն է կրում
- Ո՞րն է հայկական առաջին համր ֆիլմը
- Ո՞րն է հայկական առաջին հնչյունային ֆիլմը
- Նշել որևէ պատմահեղափոխական ֆիլմ
- Նշել եղեռնի մասին նկարահանած ֆիլմերից մի քանիսը

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը գիտի ֆիլմի անվանումը, ճանաչում է դերասաններին, գիտի, թե ով է նկարահանել ֆիլմը և որ թնականին: Մեկնաբանում է ֆիլմի հինական գաղափարն ու սյուժեն:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, օգտագործվում են պրոյեկտոր, տեսաերիզներ, հեռուստացույց, համակարգիչ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 8 դասաժամ

Գործնական՝ 12 դասաժամ

| № | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 1.1 | Ֆիլմ՝ սյուժե և կերպարներ | 1 | 1 | |
| 1.2 | Գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր | 1 | 1 | |
| 1.3 | Լիամետրաժ և կարճամետրաժ ֆիլմեր | 1 | 1 | |
| 1.4 | Դրամատիկ և կատակերգական ֆիլմեր | 1 | 1 | |
| 1.5 | Պետկինոյի հիմնադրումը և վերանվանումը հայֆիլմի | 1 | 1 | |
| 1.6 | Հայկական առաջին համր ֆիլմի ստեղծումը «Նամուս» | 1 | | 1 |
| 1.7 | Հայկական առաջին հնչյունային ֆիլմի ստեղծումը «Պեպո» | 1 | | 1 |
| 1.8 | Հայկական պատմական ֆիլմեր «Դավիթ Բեկ», «Հյուսիսային ծիածան»… | 2 | | 2 |
| 1.9 | Հայկական պատմահեղափոխական ֆիլմ «Զանգեզուր», «Սարոյան եղբայրներ»… | 2 | | 2 |
| 1.10 | Եղեռնի մասին ֆիլմեր. «Մայրիկ», «Պարադի փողոց 588», «Նահապետ»… | 2 | | 2 |
| 1.11 | Խորհրդային շրջանի ֆիլմեր «Մեր մանկության տանգոն», «Հին օրերի երգը»… | 2 | | 2 |
| 1.12 | Մուլտֆիլմ՝ սյուժե և կերպարներ | 1 | 1 | |
| 1.13 | Հեքիաթների սյուժեներով մուլտֆիլմեր «Չախորդ Փանոս», «Քաջ Նազար» | 2 | 1 | 1 |
| 1.14 | Նորաստեղծ լիամետրաժ մուլտֆիլմեր՝ «Անահիտ, Սասունցի Դավիթ | 2 | 1 | 1 |
| | *ԸՆԴՀԱՆՈՒՐ* | *20* | *8* | *12* |

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կճանաչի հայաստանաբնակ և սփյուռքահայ ռեժիսորներին՝ Համո Բեկնազարյան, Հենրիկ Մալյան, Անրի Վերնոյ, Էդմոնդ Քյոսայան, Ֆրունզե Դովլաթյան, կիմանա նրանց նկարահանած ֆիլմերը:**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է.

- Ճանաչի Համո Բեկնազարյանին որպես «հայֆիլմի հիմնադիր» և ռեժիսոր
- Ճանաչի Հենրիկ Մալյանին և Ֆրունզե Դովլաթյանին, իմանա նրանց նկարահանած ֆիլմերը
- Ճանաչի Անրի Վերնոյին և Էդմոնդ Քյոսայանին որպես սփյուռքահայ և ռուսաստանաբնակ ռեժիսորների

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսումնառության ընթացքում աշակերտները կծանոթանան հայաստանաբնակ և սփյուռքահայ ռեժիսորների կյանքին ու գործունեությանը: Յուրաքանչյուր աշակերտ կտրվեն նախօրոք պատրաստված հետևյալ հարցերով քարտեր.

- Նշել, թե որ ստեղծագործության մոտիվներով է նկարահանվել տվյալ ֆիլմը
- Թվարկել նշված ռեժիսորի նկարահանած ֆիլմերից մի քանիսը
- Ներկայացնել նշված ռեժիսորի կյանքն ու գործունեությունը

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը իմանում է տվյալ ռեժիսորի նկարահանած ֆիլմերից մի քանիսը, ֆիլմի ստեղծման մոտիվները:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է գործնական պարապմունքների միջոցով, օգտագործվում է պրոյեկտոր, տեսաերիզներ, հեռուստացույց, համակարգիչ, թերթեր, ամսագրեր օժանդակ գրքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական՝ 2.5 դասաժամ

Գործնական՝ 2.5 դասաժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 2.1 | Համո Բոկնազարյան. կենսագրություն, ֆիլմեր | 1 | 0.5 | 0.5 |
| 2.2 | Հենրիկ Մալյան. կենսագրություն, ֆիլմեր | 1 | 0.5 | 0.5 |
| 2.3 | Ֆրունզե Դովլաթյան. կենսագրություն, ֆիլմեր | 1 | 0.5 | 0.5 |
| 2.4 | Էդմոնդ Քյոսայան. կենսագրություն, ֆիլմեր | 1 | 0.5 | 0.5 |
| 2.5 | Անրի Վերնոյ. կենսագրություն, ֆիլմեր | 1 | 0.5 | 0.5 |
| | *ԸՆԴՀԱՆՈՒՐ* | *5* | *2.5* | *2.5* |

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կճանաչի հայ կինոյի մեծերին՝ Մհեր Մկրտչյան, Սոս Սարգսյան, Հրաչյա Ներսիսյան, Գալյա Նովենց, Վարդուհի Վարդերեսյան, Շառլ Ազնավուր…**

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Աշակերտը պետք է

- Ճանաչի հայ անվանի դերասաններին
- Իմանա նրանց մասնակցությամբ ֆիլմերը
- Իմանա նրանց խաղացած դերերն ու կերպարները
- Ճանաչի Շառլ Ազնավուրին նաև որպես դերասանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Ուսումնառության ընթացքում աշակերտները կծանոթանան հայ անվանի դերասանների և դերասանուհիների կյանքին ու գործունեությանը: Յուրաքանչյուր աշակերտ կներկայացնի իրեն նախօրոք հանձնարարված դերասանի կյանքն ու գործունեություն, տվյալ դերասանի մասնակցությամբ ֆիլմերը: Աշակերտներին կտրվեն քարտեր հետևյալ հարցերով.

- Ո՞վ է Պեպոյի դերակատարը
- Ո՞վ է Նատոյի դերակատրը
- Նշել Գալյա Նովենցի մասնակցությամբ ֆիլմերից մի քանիսը
- Ո՞վ է Մարգարիտի դերակատարը «Պատվի համար» ֆիլմից
- Ովքեր են Հայկի և Գևորգի դերակատարները «Սարոյան Եղբայրներ ֆիլմից»

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե աշակերտը իմանում է տվյալ դերասանի մասնակցությամբ ֆիլմերից մի քանիսը, վերլուծում է նրա կերպարն տվյալ ֆիլմում:

Արդյունքի գնահատման որոշակի քայլեր նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսուցումն իրականացվում է գործնական և տեսական պարապմունքների միջոցով, օգտագործվում է պրոյեկտոր, տեսաերիզներ, հեռուստացույց, համակարգիչ, թերթեր, ամսագրեր, օժանդակ գրքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական՝ 9 դասաժամ

| Հ/Հ | ԹԵՄԱ | ԸՆԴՀ. | ՏԵՍ. | ԳՈՐԾ. |
|---|---|---|---|---|
| 3.1 | Հրաչյա Ներսիսյան՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.2 | Մհեր Մկրտչյան՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.3 | Սոս Սարգսյան՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.4 | Խորեն Աբրահամյան՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.5 | Շառլ Ազնավուր՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.6 | Ազատ Շերենց՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.7 | Ժաննա Ավետիսյան՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.8 | Գայյա Նովենց՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| 3.9 | Վարդուհի Վարդերեսյան՝ ֆիլմեր, կերպարներ | 1 | | 1 |
| | *ԸՆԴՀԱՆՈՒՐ* | *9* | | *9* |

*ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*


1. «Հայֆիլմ» կինոստուդիայի ֆիլմադարան
2. ՊԵՊՈ. 85 տարի առաջ նկարահանված ֆիլմ
https://kinoashkharh.am/2020/04/pepo-85-tari-araj-nkarahanvac-film/
3. Ալեքսանդր Շիրվանզադե, Նամուս
https://grqaser.org/am/871/
4. Անրի Վերնոյ, Մայրիկ
https://zangakbookstore.am/mayrik
5. Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա
https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D6%86%D5%AB%D5%AC%D5%B4
6. «Համո Բեկնազարյան» պատկերազիրք
https://www.armenpress.am/arm/news/1103944.html
7. Հենրիկ Մալյան : Գիրք- ալբոմ
https://opac.flib.sci.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=496789
8. Ֆրունզե Դովլաթյան
https://clck.ru/34ffwm
9. Հնդկական երկու ֆիլմեր՝ «Ալի Բաբան և 40 ավազակները», «Մուստաֆա» Ֆրունզիկի մասին https://www.aravot.am/2021/08/14/1210089/
10. Ֆիլմ՝ սյուժե և կերպարներ
https://www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=1248
https://hy.wikipedia.org/wiki/Սյուժե
11. Գեղարվեստական և վավերագրական ֆիլմեր
https://hy.wikipedia.org/wiki/Վավերագրական_ֆիլմ
https://www.wikiwand.com/hy/Գեղարվեստական_ֆիլմ
12. Լիամետրաժ և կարճամետրաժ ֆիլմեր
https://hy.wikipedia.org/wiki/Լիամետրաժ_ֆիլմ
https://hy.wikipedia.org/wiki/Կարճամետրաժ_ֆիլմ
13. Դրամատիկ և կատակերգական ֆիլմեր
https://ru.wikipedia.org/wiki/Драматический_фильм
https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/976353
14. Պետկինոյի հիմնադրումը և վերանվանումը հայֆիլմի
https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D6%86%D5%AB%D5%AC%D5%B4
15. Հայկական առաջին համր ֆիլմի ստեղծումը «Նամուս»
https://www.youtube.com/watch?v=DYTMIeN7_AA
16. Հայկական առաջին հնչյունային ֆիլմի ստեղծումը «Պեպո»
https://www.youtube.com/watch?v=ZDEy_7BxVfs
17. Հայկական պատմական ֆիլմեր «Դավիթ Բեկ», «Հյուսիսային ծիածան»…
Դավիթ Բեկ - https://www.youtube.com/watch?v=FvARKfwVle0
Հյուսիսային ծիածան - https://www.youtube.com/watch?v=UT8XITUa4TY
18. Հայկական պատմահեղափոխական ֆիլմ «Զանգեզուր», «Սարոյան եղբայրներ»…
Զանգեզուր - https://www.youtube.com/watch?v=dI9WhBFtRFo
Սարոյան եղբայրներ - https://www.youtube.com/watch?v=wF7XYmtywaQ
**19.** Եղեռնի մասին ֆիլմեր. «Մայրիկ», «Պարադի փողոց 588», «Նահապետ»…
Մայրիկ - https://www.youtube.com/watch?v=ueJGr7cLB3w

Պարադի փողոց 588 - https://www.youtube.com/watch?v=8TMqcuFuKXM
Նահապետ - https://www.youtube.com/watch?v=mcAU2aiQs8Q
20.Խորհրդային շրջանի ֆիլմեր «Մեր մանկության տանգոն», «Հին օրերի երգը»…
Մեր մանկության տանգոն - https://www.youtube.com/watch?v=MWmqWCX-_gE
Հին օրերի երգը - https://www.youtube.com/watch?v=5sYWxSkj7HM
21.Մուլտֆիլմ՝ սյուժե և կերպարներ
https://tvorcheskie-proekty.ru/node/224
22.Հեքիաթների սյուժեներով մուլտֆիլմեր «Չախորդ Փանոս», «Քաջ Նազար»
Չախորդ փանոս - https://www.youtube.com/watch?v=oiSBRN0Q3rw
Քաջ նազար - https://www.youtube.com/watch?v=YLThfNJMAgA
23.Նորաստեղծ լիամետրաժ մուլտֆիլմեր՝ «Անահիտ», «Սասունցի Դավիթ»
Անահիտ - https://www.youtube.com/watch?v=Ov0mkCqUUTI
Սասունցի Դավիթ - https://www.youtube.com/watch?v=lByUKud6UL8
24.Համո Բեկնազարյան. կենսագրություն, ֆիլմեր
https://www.encyclopedia.am/pages.php?bId=1&hId=1016
25.Հենրիկ Մալյան. կենսագրություն, ֆիլմեր
https://avproduction.am/?ln=am&page=person&id=181
https://www.google.ru/search?q=հենրիկ+մալյան&newwindow=1&sxsrf=APwXEdcsAfXDkZRL_11J7HbckHwY2kQFTA%3A1686551174983&ei=hrqGZJ7PO_GSxc8Px4O5oAQ&ved=0ahUKEwieqrjdjL3_AhVxSfEDHcdBDkQQ4dUDCA8&uact=5&oq=հենրիկ+մալյան&gs_lcp=Cgxnd3Mtd2l6LXNlcnAQAzIECCMQJzIHCC4QExCABDIHCAAQExCABDIHCAAQExCABDIHCAAQExCABDIHCAAQExCABDIICAAQFhAeEBMyCAgAEBYQHhATMggIABAWEB4QEzoHCCMQigUQJzoHCAAQigUQQzoFCAAQgAQ6BQguEIAEOgYIABAWEB46BQghEKABSgQIQRgAUABYpB9gwCFoAnABeACAAZwCiAGcEZIBBjAuMTQuMZgBAKABAcABAQ&sclient=gws-wiz-serp#fpstate=ive&vld=cid:4ec43c99,vid:buo7DEgCyic
26.Ֆրունզե Դովլաթյան. կենսագրություն, ֆիլմեր
https://avproduction.am/?ln=am&page=person&id=323
https://mediamax.am/am/column/121248/
27.Էդմոնդ Քյոսայան. կենսագրություն, ֆիլմեր
https://hy.delachieve.com/ֆիլմոգրաֆիա-եւ-կենսագրությունը/
28.Անրի Վերնոյ. կենսագրություն, ֆիլմեր
https://auroraprize.com/hy/henri-verneuil-film-director
https://www.google.ru/search?q=անրի+վերնոյ&newwindow=1&sxsrf=APwXEdc1buuhfNpdVuO8MoXdv1a6gP3ViA%3A1686551519628&ei=37uGZIj7JeCVxc8P9-mdyAQ&ved=0ahUKEwjI5uOBjr3_AhXgSvEDHfd0B0kQ4dUDCA8&uact=5&oq=անրի+վերնոյ&gs_lcp=Cgxnd3Mtd2l6LXNlcnAQAzIFCAAQgAQyBQguEIAEMgYIABAWEB4yBggAEBYQHjIGCAAQFhAeMgYIABAWEB4yBggAEBYQHjIGCAAQFhAeMgYIABAWEB4yCQgAEBYQHhDxBDoECCMQJzoHCAAQigUQQzoECAAQHjoTCC4QgAQQlwUQ3AQQ3gQQ3wQYAUoECEEYAFAAWKcPYJoRaABwAHgBgAG2AogBsw2SAQgwLjEwLjAuMZgBAKABAcABAdoBBggBEAEYFA&sclient=gws-wiz-serp#fpstate=ive&vld=cid:00b69e56,vid:QLtRve2b8-s
29.Հրաչյա Ներսիսյան՝ ֆիլմեր, կերպարներ
https://armeniatoday.news/hy/culture/33983/
30.Մհեր Մկրտչյան՝ ֆիլմեր, կերպարներ
https://armeniadiscovery.com/hy/articles/mher-mkrtchyan
31.Սոս Սարգսյան՝ ֆիլմեր, կերպարներ
https://www.youtube.com/watch?v=ccG5zm0YuCo
32.Խորեն Աբրահամյան՝ ֆիլմեր, կերպարներ
https://hy.wikipedia.org/wiki/Խորեն_Աբրահամյան

https://168.am/2021/05/02/1505632.html
33.Շառլ Ազնավուր՝ ֆիլմեր, կերպարներ
https://168.am/2021/05/22/1517614.html
https://www.youtube.com/watch?v=lRHC4aFwdB0
34.Ազատ Շերենց՝ ֆիլմեր, կերպարներ
https://www.wikiwand.com/hy/Ազատ_Շերենց
https://avproduction.am/?page=person&id=3&ln=am
35.Ժենյա Ավետիսյան՝ ֆիլմեր, կերպարներ
https://hy.wikipedia.org/wiki/Ժենյա_Ավետիսյան
36.Գալյա Նովենց՝ ֆիլմեր, կերպարներ
https://hy.wikipedia.org/wiki/%D4%B3%D5%A1%D5%AC%D5%B5%D5%A1_%D5%86%D5%B8%D5%BE%D5%A5%D5%B6%D6%81
37.Վարդուհի Վարդերեսյան՝ ֆիլմեր, կերպարներ
https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B0%D5%AB_%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A5%D6%80%D5%A5%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6